ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<…>> նոյեմբերի 2010թ. N ..... -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 116-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի <<Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանելու մասին>> N 116-Ն որոշման հավելվածի 19-րդ և 20-րդ կետերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի N 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին » որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին:

Երևան քաղաքի ավագանու **«**Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի N 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**»** որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի N 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հունիսի 18-ի N 116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Թաղային ներկայացուցիչների միջոցով Երևանի վարչական շրջանների ղեկավարների՝<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորությունների իրականացման անհրաժեշտությունը առկա չէ և այդ աշխատանքների կատարումն կարող է իրականացվել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և (կամ) Երևանի ենթակայության կազմակերպությունների միջոցով: